




## 235 տարի Ռուսաստանի երկնքի տակ



# Վառ տոնակատարություն Թոփթիում







Թոփթիի օրվան և Դոնի երկրամասում հայկական բնակավայրերի հիմնադրման 235-ամյակին նվիրված տոնակատարությանը անցած կիրակի մասնակցեցին բազմաթիվ մարդիկ, որոնք հաճույքով դիտեցին մասսայական վառ տեսարաններն ու մեծ բավականություն ստացան իրենց համար կատարված հոգեթով երգ ու պարից:

Արարողությունն սկսվեց առավոտյան Մեծ Չորվախ աղբյուր-հուշարձանի մոտից: Ճերմակ ու վարդագույն նուրբ զգեստներ հագած նազելի աղջիկները հերթով մոտեցան ակնաղբյուրին, կժերով պաղ ջուր առան, բռնեցին ուսերի վրա և սկսեցին իրենց հեզաճկուն պարը: Իսկ նվագում էին Դհոլ-զուռնա անսամբլ կազմած Ալբերտ Բայանը, Ասվատուր Ջլաուխովը և Հակոբ Նանավյանը:



Թարմ ծաղիկներ ու ծաղկեպսակներ դնելով Հաղթանակի 60-ամյակի զբոսայգում կանգնեցված հուշարձանի պատվանդանին, վետերանները գյուղապետի հետ շարժվեցին դեպի Հայրենական մեծ պատերազմում զոհված համագյուղացիների հիշատակը հավերժացնող Փառքի պանթեոն և այստեղ ու մոտակա խաչքարի պատվանդանին նույնպես ծաղկեպսակներ դրեցին:

Այնուհետև մարդիկ (շատերը ոտքով, ոմանք էլ ձիակառքերով) եկան ու հավաքվեցին կուլտուրայի տան դիմացի հրապարակում, որտեղ էլ կատարվեց տոնակատարության հանդիսավոր մասի բացումը:

Ներկա էին շրջանի գլխավոր Արշակ Փորքշեյանը, շրջանի վարչապետի առաջին տեղակալ Վլադիմիր Քիլաֆյանը, դեպուտատների շրջանային Ժողովի նախագահ Ծերոն Քեչեջիյանը, Թոփթիի գյուղապետ Աշոտ Դերեմյանը, Լուկաշինի անվան կոլտնտեսության նախագահ Արշակ Սախաջիյանը, գյուղի վետերանների խորհրդի նախագահ Ռաֆայել Դոդոխյանը, տեղական կազմակերպությունների, արտադրական ձեռնարկությունների ղեկավարներ, պատերազմի և աշխատանքի վետերաններ, բազմաթիվ դպրոցականներ ու մանկապարտեզ հաճախող երեխաներ:

Ներկաներին ողջունեց և տոնի առթիվ շնորհավորեց գյուղապետ Աշոտ Դերեմյանը: Շրջանի գլխավոր Արշակ Փորքշեյանը ջերմ խոսքեր ուղղեց ամենքին և ցանկացավ նրանց առողջություն, երկար կյանք և ամենայն հաջողություններ: Ապա շնորհավորանքի խոսքեր ասացին Ծերոն Քեչեջիյանը, Արշակ Սախաջիյանը, Ռաֆայել Դոդոխյանը:

Տեղի ունեցավ 50 տարի համատեղ ապրած ամուսին զույգերի մեծարում և նորապսակ զույգերի փառաբանում:

Երկարամյա բարեխիղճ աշխատանքի և հարազատ գյուղի զարգացման գործում ունեցած մեծ ավանդի համար մի խումբ թոփթեցիների գյուղապետը հանձնեց շնորհակալագրեր ու թանկարժեք նվերներ:



Մշակույթի աշխատողները հավաքվածների համար տվեցին ճոխ համերգ: Ելույթ ունենալով մեկը մյուսի հետևից, երգի, պարի ինքնագործ խմբերը, մենակատարները հոգեկան մեծ բավականություն պատճառեցին ներկաներին:

Տեղի ունեցան կոխի ավանդական դարձած, ինչպես նաև ծանրոցի բարձրացման մրցումներ, որոնց մասնակցեցին բազմաթիվ պատանի մարզիկներ: Շատերն էլ մեծ ցանկությամբ մասնակցեցին անցկացված վիճակախաղին:

Մինչև ուշ երեկո գյուղում շարունակվեց ժողովրդական ուրախությունը, մարդիկ երգում, պարում և զվարճանում էին:

Տոնակատարությունը Թոփթիում անցավ շատ հաջող և ավարտվեց երկնասփյուռ հրարձակումով:

Հ ՍԱՐԳՍՅԱՆ

*Լուսանկարները՝ Ա. ՄԻՐՈՒՔՅԱՆԻ*